Նրա աչքը ընկաւ իրեղէնների վրայ, որ գնել էր վաճառականներից, վեր առեց մի կողմը նետեց, ասելով.

— Տարէք այդ դրամները մի տեղում կորցրէք:

— Ինչո՞ւ:

— Բոլորը կեղծ է:

— Եւ դու չճանաչեցի՞ր սկզբում:

— Ճանաչեցի, բայց դարձեալ գնեցի: Ես դիտմամբ ընտրեցի կեղծերը:

— Դու թոյլ տոեցիր, որ խաբե՞ն քեզ:

— Այո, ես թոյլ տոեցի, որ խաբեն ինձ:

— Ինչո՞ւ, այդ ի՞նչ խելք է:

— Որ նրանք կարծեն, թէ ես հետաքրքրւում եմ միայն հնութիւններով, որ նրանք կարծեն, թէ ես միամիտ եւրոպացի եմ, թէեւ վատ հնագէտ եմ:

— Ի՞նչ երկիւղ ունէիր նրանցից:

— Եթէ հասկանային, որ ես հայ եմ, իսկոյն կը գնային եւ, որտեղ յարկն է, կը մատնէին ինձ:

— Նրանք խոստացան նոր իրեղէններ եւս բերել, եւ դու կրկին պիտի ընդունե՞ս նրանց:

— Կ'ընդունեմ եւ դարձեալ կը գնեմ:

Ես զարմանում էի, նա որտեղի՞ց այդքան փող ունէր:

Նա իր ոսկիները այնպիսի առատաձեռնութեամբ էր շպրտում, որպէս սոխի կեղեւներ:

## Է. ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Մենք պատրաստոեցանք գնալ հայոց առաջնորդի մօտ:

— Սրբազանի մօտ դատարկաձեռն չի կարելի գնալ, — ասաց Ասլանը իր արկղներից մէկը բաց անելով, — նրան պէտք է մի որեւիցէ ընծայ տանել:

Նա դուրս բերեց քթախոտի մի գեղեցիկ տուփ, ասելով.

— Արեւելքում պաշտօնական անձինք ընծաներ շատ են սիրում...

— Բայց դու փաշային առանց ընծայի ներկայացար:

— Դրա փոխարէն ես բժշկում եմ նրա որդուն: